

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄՔ

№ 0306/1809

22.04.2018թվ.

ՀՀ ոստիկանության պետ,  
գեներալ-գնդապետ  
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի ապրիլի 21-ին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Երևանի ԶՊՎ արձանագրել է.


Թերություններ՝

Նոր վերանորոգված ԶՊՎ-ն ոչ ճիշտ շինարարական աշխատանքներ կատարելու արդյունքում նորից քայլայվել է:

Խախտումներ՝

Ընդհանուր <<ԶՊՎ-ում պահվող անձանց հաշվառման >> գրանցամատյանում գրառումները կատարվում են խախտումներով, օրինակ, համապատասխան գրանցամատյանի յոթերորդ սյունակում նախատեսված է գրանցել ձերբակալման ամսաթիվը և ժամանակը: Նշված այդուսակում գրանցում են ձերբակալման աձրանագրությունը կազմելու ժամը, այն դեպքում, եթե տվյալ գործողությունները կարգավորվում է <<ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Ս 18.12.2009թ-ի>>, որտեղ 18-րդ և 19-իր կետերով մեկնաբանվում է ձերբակալում հասկացությունը:

18. <<ՀՀ բրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Զերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմինն բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարծաժամկետ պահելու համար»:  
Այս բնորոշումից երևում է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝ (1) անձին ազատությունից փաստացի գրկելը, (2) նրան իրավասու մարմինն բերելը, (3) ձերբակալման արձանագրություն կազմելը և (4) այդ



հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից:

Նախրան դա՝ անձը, փաստացի արգելանքի վերցվելով և բրեական հետապնդման մարմին բերվելով, դեռևս ձերբակալվածի կարգավիճակ չի կարող ունենալ, միշտեռ նրան արգելանքի վերցնելու և վարույթն իրականացնող մարմին բերելու հիմքը հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածն է՝ զուգորդված նրա փախուստը կանխելու նպատակով: Ընդ որում, այստեղ կասկածի հիմնավորվածության աստիճանն է՝ ավելի ցածր է, քան ձերբակալման դեպքում>>:

19. <<Եթե բերված անձի նկատմամբ վարույթն իրականացնող մարմինը շարունակում և ավարտին է հասցնում ձերբակալման գործընթացը, ապա ՀՀ բրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ նախադասության ուժով ձերբակալման ժամկետի հաջարկը սկսվում է արգելանքի վերցնելու պահից, սակայն դա կատարվում է հետադարձ կարգով: Ուստի արգելանքի վերցված ու վարույթն իրականացնող մարմինը բերված անձը, նախրան ձերբակալման արձանագրությունն իրեն հայտարարելը, չի կարող բավարար որոշակիությամբ զիտակցել իր կարգավիճակը: Ավելին, քանի դեռ արձանագրությունը կազմված չէ, նա կարող է ազատ արձակվել՝ այդպես էլ չստանալով ձերբակալվածի կարգավիճակ>>:

Արդյունքում, նշված սյունակում պետք է գրվի անձի փաստացի ազատությունից գրկելու ժամը, այլ ոչ թե ազատությունից գրկված անձի ձերբակալման արձանագրության կազմման ժամը, որի արդյունքում էլ հնարավոր չի լինում պարզել, թե նշված անձի Սահմանադրությամբ սահմանված 72 ժամի իրավունքը խախտվել է, թե ոչ: Տվյալ փաստի հետ կապված անհրաժեշտ հիմքերը ցանկության դեպքում կարող ենք տրամադրել:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն դրանց վերաբերյալ:

### Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված  
անձանց պահելու վայրերում վերահսկողություն  
իրականացնող հասարակական Դիտորդական  
խմբի նախագահ՝

Հ. Հովհաննիսյան